

Որակի հոշակագիր SՀS-ի օգտագործումը տնային տնտեսություններում

0 Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	SՀS-ի օգտագործումը տնային տնտեսություններում
0.2	Ոլորտը	Ծառայություններ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Տնային տնտեսությունների վիճակագրության բաժին Բաժնի պետ Լուսինե Մարկոսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 524 326 Էլ. փոստ : lusine_markosyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը (SSԿԱՀ) ներառում է հարցեր կապված տնային տնտեսություններում Ինտերնետի առկայության և օգտագործման հետ, ինչը հնարավորություն է ընձեռում նկարագրել գիտելիքների վրա հիմնված հասարակությունը:</p> <p>Հետազոտության նպատակը՝ վերլուծել Ինտերնետի մատչելիությունը և օգտագործումը, ինչպես նաև հետևել դրա զարգացմանը: Ինտերնետի մասին հարցերն առաջին անգամ ներառվել են SSԿԱՀ հարցաթերթում 2004թ.-ին և տարեց տարի վերանայվել և կատարելագործվել են, նպատակ ունենալով արտացոլել նոր տեսակետներ և զարգացումներ: Արմստատի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունները միջազգայնորեն համարվում են բնակչության կենսամակարդակը բնութագրող տվյալների հավաքման առավել կարևոր գործիք և հիմնված են միջազգային համագործակցության վրա: Հետազոտությունների միջոցով հավաքվում է բավական հարուստ և արժեքավոր տեղեկատվություն տնային տնտեսությունների բարեկեցության վերաբերյալ, ինչը Արմստատին հնարավորություն է ընձեռում տրամադրել կառավարությանը և հանրությանը արդիական տեղեկատվություն տարեկան կտրվածքով՝ բնակչության կենսամակարդակի փոփոխության վերաբերյալ, այդ թվում՝ Ինտերնետի մատչելիությունը և օգտագործումը :</p>

		Արմատատը շարունակաբար ջանքեր է գործադրում կատարելագործելու այդ հետազոտությունները՝ զարգացած երկրներում նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ ամբողջովին համադրելի դարձնելու ակնկալիքով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: SSԿԱՀ արդյունքները հիմնականում կիրառվում են երկրում սպառման վրա հիմնված աղքատության մակարդակի գնահատման համար, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի վերաբերյալ այլ ցուցանիշների միջոցով արժեքավոր տեղեկատվություն ստամադրելու համար, այդ թվում Ինտերնետի մատչելիությունը և օգտագործումը:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	7872 տնային տնտեսություններ (SS) տարեկան ընդգրկմամբ (SS ուղղակի այցելությամբ), ընտրանքի համար օգտագործվում է հանրապետության մասնավոր SS հասցեների ամբողջական բազան:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա: Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. նոյեմբերի 28-ի թիվ 1866 որոշման Արմատատը պարբերաբար՝ յուրաքանչյուր տարի պետք է ապահովի տնային տնտեսությունների հետազոտությունների անցկացումը:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի

	տեղեկություններ (ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Արմատատը չի անցկացրել առանձին հետազոտություն Ինտերնետի մատչելիության և օգտագործման վերաբերյալ:</p> <p>Տեղեկատվությունը հավաքվում է միայն ՏՏԿԱՀ-ի միջոցով սկսած 2004թ.-ից: Առաջին հարցը վերաբերում է տնային տնտեսությունում համակարգչի առկայությանը, այնուհետև Ինտերնետի մատչելիությանը և օգտագործմանը:</p> <p>Եթե անգամ տնային տնտեսությունում առկա չէ համակարգիչ, հարց է տրվում Ինտերնետի մատչելիության և օգտագործման մասին աշխատավայրում, ուսման վայրում, անվճար և վճարովի կենտրոններում, բջջային հեռախոսի միջոցով:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հետազոտության մեթոդաբանությունը (ցուցանիշների համախումբը, սահմանումները, դասակարգումները, տեղեկատվական աղբյուրները և հաշվարկման գործիքակազմը) խարսխված է Համաշխարհային բանկի մեթոդաբանության վրա:</p> <p>Հետազոտության չափման միավորը հանդիսանում է տնային տնտեսությունը:</p> <p>Տնային տնտեսությունը՝ մեկ անձ կամ անձանց մի խումբ է, ովքեր սովորաբար բնակվում են միասին, վարում են միասնական տնտեսություն և ունեն միասնական բյուջե:</p> <p>Տնային տնտեսությունները հարցման են ենթարկվել հետևյալ հարցերով. Ինտերնետի մատչելիությունը, մատչելիության տեսակը և գտնվելու վայրը:</p> <p>Անձնական համակարգչի և ինտերնետի մատչելիությունը տանը և այլ վայրերում հաշվարկվում են տոկոսներով ըստ տնային տնտեսությունների:</p>
2 Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Հետազոտություններն իրականացվում են մեկ տարվա

		ընթացքում՝ տնային տնտեսությունների և բնակավայրերի ամենամսյա փոխարինմամբ (ռոտացիայով):
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տվյալները հրապարակվում են հետազոտությանը հաջորդող տարվա չորրորդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
3 Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Հետազոտության արդյունքները ներկայացուցչական են երկրի մակարդակով:
3.2	Անճշտության աղբյուրները	<p>Հետազոտությունն իրականացվում է ըստ մարզերի ստրատիֆիկացված, երկաստիճան ընտրանքի սկզբունքով:</p> <p>Հետազոտությունն անց է կացվում է ողջ տարվա ընթացքում՝ ռոտացիոն սկզբունքով: Դիտարկվող միավորը SS-ն է: Ամսական ընտրանքի չափը կազմում է 656 SS, իսկ 2010թ.- ին SS տարեկան ընտրանքը կազմել է 7872 SS: Պատասխանների մակարդակը (մասնակցությունը) կազմում է մոտ 92%: Յուրաքանչյուր ռեսպոնդենտ տարվա ընթացքում հետազոտության մեջ կարող է ընդգրկվել միայն մեկ անգամ: Հարցումն իրականացվում է անմիջապես SS այցելությամբ:</p> <p>Հետազոտության արդյունքներն ունեն որոշակի ոչ ընտրանքային սխալներ, որոնց պատճառներից են.</p> <p>ա) 2001թ. ՀՀ մարդահամարի արդյունքներով ձևավորված հասցեների բազան, որն արդիականացվում է 10 տարին 1 անգամ:</p> <p>բ) հետազոտությանը մասնակցելու SS հրաժարման դեպքերը,</p> <p>գ) ոչ լիարժեք պատասխանները և այլն:</p> <p>Հետազոտության տվյալները կշռվում են և տարածվում</p>

		գլխավոր համակցության նկատմամբ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Տե՛ս բաժին 3.2-ը:
4 Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Ժամանակի ընթացքում մասնակի փոփոխությունների է ենթարկվել հետազոտության հարցաթերթը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	SSԿԱՀ-ից բացի, տնային տնտեսություններում Ինտերնետի օգտագործման (մատչելիության) այլ աղբյուրներ չկան: Անհրաժեշտություն կա անցկացնելու հանրապետությունում առանձին միանվագ հետազոտություն «Ինտերնետի օգտագործումը (մատչելիությունը) տնային տնտեսություններում» խորագրով:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	SSԿԱՀ արդյունքներով հաշվարկված ցուցանիշները հրապարակումից հետո կարող են ենթարկվել ճշգրտման: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:
5 Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Հրապարակումներ Տարեկան հրապարակումներ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույց (հայերեն և անգլերեն): Տվյալների բազա http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6 Ինտերնետային հասցե Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն և անգլերեն հետևյալ հասցեով՝ http://www.armstat.am/am/?nid=82 :
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	SSԿԱՀ տվյալների բազան պարունակում է անհատական անվանագրքով տվյալներ, որոնք համապատասխան

		կարգով պահպանվում և արխիվացվում են:
5.3	Փաստաթղթավորումը	Սահմանումների, տվյալների աղբյուրների և մեթոդաբանության փաստաթղթերը հասանելի են Արմստատի պաշտոնական կայքի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցում հետևյալ հասցեով՝ http://www.armstat.am/am/?nid=82:
5.4	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:
6 Լրացուցիչ փաստաթղթավորում		
		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: